**ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱ**
**Հավելված 1**
ՀՀ գիտության կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2020թ. հուլիսի 14-ի N 45-Ա հրամանի

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

### 1. Ընդհանուր դրույթներ

**1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գիտության քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիր՝ 18-1-27.1-Ղ3-1)

**1.2 Ենթակա և հաշվետու է**

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Կոմիտեի նախագահին

**1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ**

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների պետերը

**1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը

**1.5 Աշխատավայրը**

Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Օրբելի եղբայրների 22

### 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

- ապահովում է գիտության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ու գիտության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակումը.
- ապահովում է գիտության բնագավառի հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակման և մշտադիտարկման աշխատանքները.
- ապահովում է գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի մշակման աշխատանքները.
- ապահովում է գիտության զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման աշխատանքները.
- ապահովում է գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման, գիտական կադրերի պատրաստման նպատակով ուսումնասիրությունների իրականացման աշխատանքները.

- ապահովում է գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված տվյալների ուսումնասիրության, վերլուծության և ծրագրերի մշակման աշխատանքները.
- ապահովում է գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները.
- ապահովում է Կոմիտեի իրավասության սահմաններում և Վարչության լիազորությունների շրջանակներում գիտության մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքները.
- ապահովում է գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների և գիտության զարգացման հեռանկարային ծրագրերի, գիտության բնագավառի հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի, գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների, գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն, գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված ծրագրերի մշակման համար տեղեկատվության հավաքագրման և վերլուծության աշխատանքների կազմակերպումը.
- ապահովում է տնտեսության կարիքների բավարարմանն ուղղված կիրառական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքներին և տեխնոլոգիական գործընթացներին աջակցության աշխատանքները.
- ապահովում է գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի իրականացմանն աջակցության աշխատանքների իրականացումը.
- ապահովում է գիտական մշակումների պատվերի ձևավորմանն ուղղված մեխանիզմների մշակումը.
- ապահովում է օտարերկրյա պետությունների, այդ թվում՝ Սփյուռքի գիտնականների ներուժի ներգրավմանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքները.
- ապահովում է գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման իրականացմանը Վարչության մասնակցությունը.
- ապահովում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրման և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, սահմանված կարգով վարչական վիճակագրական ռեգիստրների վարման գործընթացը.
- ապահովում է Ռազմարդյունաբերական կոմիտեի և համապատասխան պետական մարմինների հետ համատեղ ռազմատեխնիկական ծրագրերի մշակման, փորձաքննության և իրականացման մշտադիտարկման կազմակերպումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի (այսուհետ՝ ՌՏԳՏ խորհուրդ) քարտուղարության վարման աշխատանքները.
- ապահովում է Կոմիտեի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքները: **(Փոփ. 24.02.2023 թ., Հր. N 15-Ա)**

**Իրավունքները՝**

- համապատասխան մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր, նախապատրաստել համապատասխան իրավական ակտերի և ծրագրերի նախագծեր, շրջանառել, կազմակերպել քննարկումներ, ստացված կարծիքներն ու առաջարկություններն ամփոփել և ներկայացնել հաստատման.
- համապատասխան ստորաբաժանումներից և գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ գիտության մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ձևավորելու, խնդիրները քննարկելու, համատեղ աշխատանքային խմբերի կազմում ներգրավվելու, ամբողջ գործընթացին մասնակցելու և Կոմիտեի համապատասխան ստորաբաժանում տրամադրելու համար.
- գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններից, բուհերից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ գիտության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության, գիտության բնագավառի հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի, գիտական մշակումների պատվերի ձևավորմանն ուղղված մեխանիզմների մշակման, գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի իրականացման, տնտեսության կարիքների բավարարմանն ուղղված կիրառական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքներին և տեխնոլոգիական գործընթացներին աջակցության համար.
- կազմել և ներդնել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ձևեր.
- գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման աշխատանքներ իրականացնելիս պահանջել ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն (այդ թվում՝ ֆինանսական).
- մասնակցել Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի նիստերին.
- ստորագրել Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը, Վարչության բաժնի պետերին տալ համապատասխան հանձնարարականներ.
- Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների, գիտական հաստատությունների ներկայացուցիչների.
- Կոմիտեի գլխավոր քարտուղարին առաջարկություններ ներկայացնել իր անմիջական ենթակայության տակ գտնվող քաղաքացիական ծառայողներին վերապատրաստելու, կարգապահական տույժի ենթարկելու և խրախուսելու վերաբերյալ.
- Կոմիտեի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում Կոմիտեի ստորաբաժանումներից պահանջել և ստանալ տեղեկատվություն, հակակոռուպցիոն

քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից պահանջել և ստանալ մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ: **(Փոփ. 24.02.2023 թ., Հր. N 15-Ա)**

**Պարտականությունները՝**

- ուսումնասիրել Վարչության գործառույթները կանոնակարգող և գործառույթների իրականացմանն առնչվող իրավական ակտերը և միջազգային փորձը.
- գիտության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության, գիտության բնագավառի հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի, գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների, գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված ծրագրերի, գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն, գիտության զարգացման հեռանկարային ծրագրերի, գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների և ոլորտի առաջանցիկ զարգացման ապահովմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների մշակման համար ուսումնասիրել և վերլուծել Վարչության Բաժինների կողմից միջազգային փորձի ուսումնասիրության, տվյալների հավաքագրման ու վերլուծության աշխատանքները, իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման, շրջանառման, հանրային քննարկումների կազմակերպման, ստացված կարծիքների ու առաջարկությունների ամփոփման աշխատանքներն ապահովելիս առաջնորդվել և պահպանել օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.
- Կոմիտեի իրավասության սահմաններում և Վարչության լիազորությունների շրջանակներում գիտության մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը Վարչության մասնակցության աշխատանքները կազմակերպելիս ուսումնասիրել և վերլուծել Վարչության Բաժինների կողմից համապատասխան ստորաբաժանումներից և գիտական կազմակերպություններից ու բուհերից հավաքագրված անհրաժեշտ տեղեկատվությունը՝ գիտության մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ձևավորելու, խնդիրները քննարկելու, համատեղ աշխատանքային խմբերի կազմում ներգրավվելու, ամբողջ գործընթացին մասնակցելու և Կոմիտեի համապատասխան ստորաբաժանում տրամադրելու համար, աշխատանքներն ապահովելիս առաջնորդվել և պահպանել օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.
- գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի և գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային ծրագրերի, գիտության բնագավառի հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի, գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների, գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված ծրագրերի մշակման համար ուսումնասիրել և վերլուծել Վարչության Բաժինների կողմից կազմակերպություններից և ծրագրերի ղեկավարներից, բուհերից համապատասխան տվյալների հավաքագրման (նաև համացանցում հասանելի

տվյալներ), դրանց մշակման և վերլուծության, միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքները, իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման, շրջանառման, հանրային քննարկումների կազմակերպման, ստացված կարծիքների ու առաջարկությունների ամփոփման, շտեմարանի կազմման և պարբերական թարմացման ու վարման աշխատանքներում առաջնորդվել և պահպանել օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.

- գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի իրականացմանն աջակցության և գիտական մշակումների պատվերի ձևավորմանն ուղղված մեխանիզմների մշակման համար ուսումնասիրել և վերլուծել Վարչության Բաժնի կողմից պետական կառավարման մարմիններից, գերատեսչություններից, գիտական կազմակերպություններից, բուհերից և տնտեսության մասնավոր հատվածից հավաքագրված անհրաժեշտ տեղեկատվությունն ու փաստաթղթերը, համապատասխան մրցույթների անցկացման՝ մրցույթների հրավերի փաթեթի հրապարակումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում, հայտերի ընդունումը, վերլուծությունը, փորձաքննության գործընթացը, շտեմարանների ստեղծումը, հայտերի ներկայացումը համապատասխան հանձնաժողովին, ընտրված մասնակիցների հետ պայմանագրերի կնքման նախապատրաստումն ապահովելիս առաջնորդվել և պահպանել օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.
- Վարչության համապատասխան Բաժինների կողմից գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման մասնակցության գործընթացում՝ ծրագրի/թեմայի կատարման ընթացքի, ձեռքբերված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների, ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, հավաքագրված տվյալների և դրանց վերլուծության հիման վրա մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի կազմում, բացահայտված խնդիրների կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների և ցուցումների մշակում ու ծրագրի/թեմայի ղեկավարին տրամադրում, մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ շտեմարանի վարում, ուսումնասիրել և վերլուծել մշտադիտարկում իրականացնող Վարչության մասնագետների գործունեությունը, հավաքագրված տվյալների հավաստիությունը, առաջնորդվել ու պահպանել օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.
- տնտեսության կարիքների բավարարմանն ուղղված կիրառական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքներին և տեխնոլոգիական գործընթացներին աջակցության ծրագրերի ու մեխանիզմների մշակման համար ուսումնասիրել և վերլուծել Վարչության Բաժնի կողմից համապատասխան կազմակերպություններից գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության (նաև համացանցում հասանելի տվյալներ), միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքները, ծրագրերի նախագծերի մշակման, շրջանառման, հանրային քննարկումների կազմակերպման, ստացված կարծիքների ու առաջարկությունների ամփոփման և դրանք հաստատման ներկայացման աշխատանքները, հաստատված ծրագրերի մրցույթների անցկացումը՝ հայտերի ընդունումը, վերլուծությունը, փորձաքննության ներկայացումը, շտեմարանների ստեղծումը, հայտերի ներկայացումը համապատասպան հանձնաժողովին, ընտրված մասնակիցների հետ

պայմանագրերի կնքումը, կազմակերպելիս առաջնորդվել և պահպանել օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.

- օտարերկրյա պետությունների, այդ թվում՝ Սփյուռքի գիտնականների ներուժի ներգրավմանն ուղղված ծրագրերի մշակման համար ուսումնասիրել և վերլուծել Վարչության մասնագետների կողմից համապատասխան շտեմարանի կազմման, թարմացման, անհրաժեշտ տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքները, ծրագրերի նախագծերի մշակման, շրջանառման, հանրային քննարկումների կազմակերպման, ստացված կարծիքների ու առաջարկությունների ամփոփման և դրանք հաստատման ներկայացման աշխատանքներ կազմակերպելիս առաջնորդվել և պահպանել օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.
- ուսումնասիրել և վերլուծել Վարչության Բաժնի կողմից համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) կազմման, ներդրման և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, սահմանված կարգով վարչական վիճակագրական ռեգիստրների վարման աշխատանքները.
- Ռազմարդյունաբերական կոմիտեի և համապատասխան պետական մարմինների հետ համատեղ ռազմատեխնիկական ծրագրերի մշակման, անհրաժեշտ ռազմատեխնիկական ծրագրերի մրցույթների կազմակերպման, հայտերի ընդունման, փորձաքննության ներկայացման և մոնիտորինգ (մշտադիտարկման) աշխատանքները կազմակերպելիս առաջնորդվել և պահպանել օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները, ուսումնասիրել և վերլուծել ՌՏԳՏ խորհրդի քարտուղարության նիստերի նախապատրաստման, գործավարության վարման, փաստաթղթաշրջանառության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, համապատասխան հրամանների և այլ գրությունների ու զեկուցագրերի նախապատրաստման աշխատանքները.
- վերահսկել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին, համագործակցությունը իրավասու մարմինների հետ.
- ստուգել Կոմիտեի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տրամադրվող տեղեկատվությունը, պարզաբանումները, միջոցներ ձեռնարկել Կոմիտեի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ:

**(Փոփ. 24.02.2023 թ., Հր. N 15-Ա)**

## 3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

**3.1 Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան)

**3.2 Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ:

**(Փոփ. 06.10.2020թ., Հր. N 108-Ա)**

**3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաները՝**

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Հասարակության հետ կապերի ապահովում
4. Բողոքների բավարարում
5. Ժամանակի կառավարում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
8. Փաստաթղթերի նախապատրաստում

**4. Կազմակերպական շրջանակը**

**4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

**4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

**4.3 Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

**4.4 Շփումները և ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

**4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: